ԿԱՐԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ԱՐՇԱՎԱՆՔԸ

19-րդ դարի 80-ական թթ. Արևմտյան Հայաստանի լեռներում առաջին զինավառ հայդուկների հանդես գալուց հետո արևելահայ երիտասարդության շրջանում սկսվեց մի ինքնաբուխ շարժում, որի նպատակն էր անցնել Երկիր և զենքով փրկել արևմտահայ եղբայրների կյանքն ու արժանապատվությունը: Հայդուկային խմբերի կազմակերպված անցումը դեպի Երկիր կոչված էր ժողովրդին հանելու դարավոր քնից, նրան մղելու ազատագրական կռվի:Այդ շարժման նախակարապետը Սարգիս Կուկունյանի գլխավորած արշավանքն էր: Այն հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ մնացել է որպես նշանակալից իրադարձություն:- Այն տեղի ունեցավ 1890 թվականի աշնանը և որպես կարևոր դեպք հանձնված է պատմությանը:

Արշավանքի նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներն ու միջոցները ձեռք առնելուց հետո արշավախումբը սեպտեմբերի վերջերին հավաքվում է Բասենի Չուրուկ գյուղի մոտ:

«Նախօրոք որոշուած էր,որ մենք մի քանի հոգով պիտի մտնենք Երկիր: Ալեքսանդրոպոլում,սակայն,այս ու այն կողմից եղած դիմումների վրայ, Կուկունյանը ծրագիրը փոխում է եւ որոշում է, ինչպես ինքն է ասում Ալաշկերտի վրայով անցնել Մուշ և այնտեղից Վանի գծով շարժուել դէպի Պարսկաստան: Տաճկաստանում իրան պիտի միանային 5,000-ից ավելի կռուողներ, որոնք իբր թէ մեզ էին սպասում...»,- իր հուշերում գրում է արշավանքի մասնակից Ասքանազը[1]:

Արշավանքից առաջ Կուկունյանը խորհրդանշական ճառով դիմում է խմբի տղաներին. «Մենք շուտով կը մտնենք Թուրքաց Հայաստան.լավ մտածեցեք. այնտեղեն վերադարձ չկայ: Մենք կերթանք մեռնելու. որպեսզի ճանապարհ հարթենք գալիք կռվող շարքերուն համար: Թող ոչ ոք ձեզմե հույս ունենա, թե կարող է ողջ մնալ: Ով որ ատկե կը վհատի, թող այժմեն վերադառնայ...»:[2] Վրեժի ծարավով լցված ոչ մի մարտիկ չլքեց շարքերը:

Այս խոսքերը չէին ասվում հերոսական քայլ անողի տպավորություն ստեղծելու կամ էլ իր մարտիկների անձնազոհությունն ու նվիրումը չափելու համար: Կուկունյանն արդեն զգում էր, որ արշավանքը չի կարող հաջող ընթացք ունենալ: Բայց ընտրությունը կատարված էր:Խումբը սկսեց իր արշավանքը:

---

[1] Հայաստանի Ազգային արխիվ,ֆ.1633, ց.5, գ. 21, թ. 83:
[2] Տես, Մ.Վարանդյան, Հ.Յ.Դաշնակցության պատմություն, Երևան, 1992, էջ 69:

Արշավանքից առաջ սրտառուչ էր խմբի սահմանն անցնելու ժամանակ գյուղացիների ցույց տված խնամքն ու գուրգուրանքը: «Տղաները քայլում էին գույգ-գույգ, լուռ ու մունջ: Հետեւից գալիս էին գիւղացիները: Հուզիչ էր տեսարանը: Հանդիպումը եւ բաժանումը գյուղացիների հետ եղավ սրտաշարժ: Կանայք շարունակ լալիս էին,աղոթում եւ բարեմաղթանքներ անում,որ սուրերս կտրուկ լինի,որ յաղթող վերադառնանք...»[3],- հիշատակում է հուշագիր Արամայիս Ազնավուրյանը:

Խմբի կազմը խայտաբղետ էր ուսանողական նստարանը թողած երիտասարդներ, հացթուխներ, գործակատարներ, հողագործներ, արհեստավորներ, որոնց մեջ չկար մեկը ,որի տարիքը հասներ 30-ի: Նրանցից շատերն առաջին անգամ էին շփվում զենքի հետ: Խումբն իր հետ ուներ 2 դրոշակ,որոնցից մեկի վրա ձեռագործված էր Գրիգոր Լուսավորչի պատկերը,իսկ մյուսի վրա մի առյուծ,ոտքի տակը կիսալուսին:Խմբի անդամներն իրենց ուսերին կրում էին զինվորական «էպոլետներ» ուսադիրներ «Մ.Հ.»* տառերով: Մեսրոպ Վարդանյանի հուշերում կարդում ենք. «Սարգիս (Կուկունյան) ու Սարդար ուսերուն վրայ կը կրեին զինվորական սպայի «հազարապետի» ոսկեթել էպոլետներ, որոնք նվիրել էին Կարսի օրիորդները»[4]:Ամբաստանագրում էլ ասված է, որ «Սարդարը կրել է 39-րդ դիվիզիայի սպայի զինանշան,շուշեցի Աբրահամը ուներ կարմիր, իսկ Կուկունեանը ճերմակ զինանշան, երկու շատ խոշոր տառերով»:[5] «Կուկունյանը գիտեր շուք տալ իր ձեռնարկներին: Նա մեզ հայտնեց նաև, որ անգլիական «Թայմզ» թերթի թղթակից Ֆելջարիցը (Ֆիցջերալդը) պիտի գար մեր խմբի քաջագործությունների մասին անգլիական մամուլում գրելու համար»,-արշավանքի մասնակից Հովսեփ Մովսիսյանի հուշագրությունից ենք տեղեկանում:[6]

Սեպտեմբերի 22-ին մոտ 110 հոգուց բաղկացած /20 -ը ձիավոր/ խումբը[7] հավաքվում է Շադևանում. «Շադևան տանող ճանապարհի վրա,ուրիշ

---

[3] Տե՛ս, Հայրենիք, 1937, թիվ 7, էջ 114:
[4] Դրոշակ, 1912, թիվ 6, էջ 166:
[5] Տե՛ս,Գիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթոն, 1934, էջ 35:
[6] Հայրենիք, 1934, փետրվար, էջ 87:
[7] Կուկունյանի արշավախմբի թվական կազմի վերաբերյալ հուշագրողների մոտ եղած տվյալները տարբեր են.Ձերբակալվելուց հետո,հարցաքննության միջոցին Կուկունյանը հայտնում է/ըստ դատական ամբաստանագրի/,որ խումբն ունեցել է 100 մարդ,ի թիվս 20 ձիավոր:Կոստանդին Լիսինյանի ցուցմունքներով 70հոգի,Ռոբեն Հովհաննիսյանն էլ միևնույն թիվը մատնանշելով ավելացնում է «և 15 ձիավոր»:Արշավանքի մեկ ուրիշ մասնակից Մեսրոպ Վարդանյանը մի փոքր տարբեր թվեր է տվել. «Մենք մնացինք 78,մեզնից 24 ձիավոր էր»/Տե՛ս,Դրօշակ,1930,թիվ 5/,«Ոմանք խումբը հաշվում էին 120,ոմանք 150 հոգի,ասում է մյուս մասնակիցը Հովսեփ Մովսիսյանը,-բայց փաստն այն է,որ մենք չհաշվեցինք վերջնականորեն,թե քանի՞ հոգի էինք.Մոտ քսան հոգի ձիաւոր էինք.Զենքերը ես էի բաժանում:Ընդամենը հարյուր կտոր զենք էր:Ոմանք եկել էին իրենց զենքերով,ոմանք էլ վերադարձան զենք չլինելու պատճառով»/Տե՛ս,Հայրենիք,1934,թիվ 4,Յովսեփ Մովսիսեանի յուշերը,էջ 88/. Նույն Մովսիսյանն իր մեկ այլ հուշով ասում է, թե

հայեր ևս միացան խմբին: Վերջինը հասավ Շադևան սեպտեմբերի 22-ին,շաբաթ օր:Գիշերով գնաց թիւրքական սահմանագլխի վրայ գտնւող լեռները: Երկուշաբթի օր հասան Թէքե-Բինա սարը»[8]: Ըստ հուշագիր Սեսրոպ Վարդանյանի «Մենք շատերս, անօթութեան համար, ուզեցինք մօտիկ ճանապարհով մտնել Ռուսաստան: Մեզի մոտիկ է Կաղզվան: Եթե մենք մարգարե լինեինք մեծ հաջողություն կգտնեինք:Այդ գիշեր Ալաշկերտի թուրք-քուրդ զորք, բոլոր կը փախնին թե հայերին երկաթե դուռ բացված է: Տուներ տեղեր թողնելով Անտապի լեռներ կելնեն, որ այնտեղ քրդեր շատ են, հայեր բոլորովին չկան: 4 ժամ է Ալաշկերտից Անտապի գյուղեր:

Բոլորս հոժարեցանք մոտիկ տեղից Ռուսաստան մտնել: Շարունակեցինք մեր ճանապարհ դեպի Թեքե -Բինայի ձոր»:[9]

«...Ամբողջ գիշեր, առանց հանգստանալու, խումբը առաջ շարժվեց,- նկարագրում է Արամայիսը.- Որպեսզի ետ մնացողներ չլինեն, Կուկունյանը երկու հոգու Սարդարին և Աբրահամին պատուիրեց, որ այդ լեռնուղիներում գնան խմբի առջևից ու հետևից և հսկեն տղաների վրայ: Մեկ-մեկ էլ ինքն էր ձին առաջ ու ետ քշում կարգ պահպանելու նպատակով: Այդ ձևով ճանապարհը շարունակեցին մինչև առավոտյան ժամը 6-ը»[10]: «Երբ Կուկունյանը մի անգամ էլ ձին քշեց դեպի խմբի ետևից, լույսը նոր-նոր բացուելիս, հանկարծ խմբի առջևի կողմից լսեց հրացանի պայթյուններ: Խումբը ւարդեն գտնվում էր բուն տաճկական հողի վրայ, Բասենի ու Ալաշկերտի արանքում: Ի՞նչ հրացանձգություն էր այդ: Հայտնի Շադևան գյուղից անցնելով Ջեակլիկ կիրճը, տղաները միանում են Բենա գյուղի արևելյան կողմում ընկած ժայռերի այրերում գտնվող խմբի մյուս մասին Բասենի Չուրուկ գյուղում...

Նույն կռվի մասին այսպես է պատմում Հովսեփ Մովսիսյանը .« Մեր արշավախումբը բռնել էր արքունական ճամբան և առաջանում էր անկանոն, խառնիխուռն: Միայն Սարդարն ու Աբրահման էին, որ արքուն պահակի դեր էին կատարում մերը սրան ու մերք նրան արքնացնելով, սթափեցնելով ու

իրենց խումբը բաղկացած էր «հարիյր տաս հոգուց: (Տես, Դրոշակ, 1930, թիվ 5: Արամայիս Ազնավուրյանի հուշերում խմբի կազմի վերաբերյալ ասված է հետևյալը «Խումբը բաղկացած էր 85 հոգուց,որից 20-23-ը ձիաւորներ էին»/Տես,Հայրենիք,1937,թիվ 4,էջ 147/: Մեզ համար ընդունելի է Դատական ամբաստանագրին կից ամբաստանյալների ցուցակը անուն- ազգանուններով և անձնական տվյալներով,ուր նրանց թիվն է 107:

[8] Տես, Դրոշակ , 1912թիվ 6,էջ 166:

[9]«Ս Հ.»տառերին տրվել են տարբեր իմաստներ:Արշավանքի մասնակից Ստեփան Ստեփանյանի /Բալաջան/ կարծիքով դրանք նշանակել են «Մայր Հայաստան»,ըստ Սեսրոպ Վարդանյանի «Միութիւն Հայաստանի», ըստ ուրիշների «Միութիւն հայրենասիրաց»: Դատական ամբաստանագրում, զույգ գլխատառերը բացատրվել են որպես «Սիացյալ Հայաստան»:Այս վերջին բացատրությունը համապատասխանում էր ռուսական կառավարության հակահայ քաղաքական որակումներին:

[9] Դրոշակ, 1930, թիվ 6-7, էջ 170:

[10] Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 46:

խրախուսելով: Մեր էշը իր բեռը շուռ տալով, փախավ անհետ: Երկրորդ օրը, կեսօրվան մոտիկ, խմբի առաջապահների մեջ իրարանցում ընկավ: Չիավորները շտապեցին դեպի այն կողմը: Մենք էլ հասանք: Բանից երևաց, որ մի ծեր քուրդ են բռնել և հասնողը իր խանչալն էր խրում թշնամու մարմինը: Քրդի ընկերը փախել էր: Չիավորները ընկան ետևից, բայց ձեռունայն վերադարձան: Երևացին նաև երեք քուրդ հեծյալներ, որոնց տեսնելուն պես մեր ձիավորները առաջ վարեցին որ բռնեն,բայց քրդերը փախան վախեցած»[11]:

Լուսաբացին խումբը հասնում է Արմուտլի(նաև՝ Արմուլու-Արմբլի - Տանձուտ),ուր տեղի բնակչությունը ջերմ ընդունելություն է ցույց տալիս և տղաներին տեղավորում տներում,իսկ առավոտյան արմուտլեցի երիտասարդության ուղեկցությամբ շարժվում Չուրուք՝ ուր պահված էին զենքերը: Խումբը մտադիր էր այստեղից Ալաշկերտի լեռնանցքով անցնել Թուրքիա: Սակայն լեռներում 2 օր մնալուց հետո (լեռներում խմբից ետ էին մնացել 25 մարդ և խումբը իջել էր Խառ, ետ մնացածներին սպասելու և կամավորներ հավաքելու), երբ հասան Թեքեբինա սարը, այդտեղ էլ իմացան, որ երկու օր առաջ Հակոբ Սարկավագի ղեկավարությամբ մի խումբ հայեր արդեն անցել են սահմանը ընդհարում և զինված մարտեր մղելով թուրքական սահմանապահ զորքի հետ: Քանի որ լեռներում ցուրտ էր, խումբը որոշեց իր նպատակի իրագործումը հետաձգել գարնանը և այստեղից էլ շարժվելով Չիչակլուի ծորը պատրաստվում են հանգստի:Ծորի երկարությունը քսան կիլոմետրից ավելի էր և մինչև լուսաբաց խումբը հազիվ կարողանում է կտրել ծորը և առավոտյան աղջամուղջին հասնել ու դիրքեր է գրավում Բոզթափայի բարձունքներին: Բալաջանի պատմությունն այդ կռվի վերաբերյալ հետևյալն է. «Ուղիղ ժամը 11-ին Չիչակլուի ծորից դուրս գալիս, մեր աջ կողմում, սարի վրայ, նկատեցինք երեք ձիավոր քրդեր, որոնք մեզ տեսնելուն պես ձիերը ետ դարձրին և արշավեցին դեպի մոտակայ քրդական Ախուար (Ախվարկ- Կ.Ե) գյուղը: Մեր ձիավորները ի զուր հետապնդեցին: Երբ մերոնք հասնում են գյուղեր, քուրդ գյուղացիները լեղապատառ դուրս են փախչում գյուղից: Մերոնք մի քանի համազարկ տալով վերադառնում են, հետները գերի բերելով մի ծեր մարդ: Խեղճն ընկավ վալադի ձիու ոտքի տակ, մտածելով թե սա է մեր մեծավորը, որովհետև վալադի ձին ամենից լավն էր»:[12] Արամայիսի ասած «հայտնի ավազակապետ Հասո-աղան», որի խումբը գլխովին ոչնչացվում ու ինքն էլ գերի է ընկնում, եղել է այդ քուրդ ծերունին, որի մասին հիշատակվում է նաև Հովսեփի ու Բալաջանի պատմության մեջ:

Հետագայում պարզվում է, որ այդ քրդերը թուրքական կառավարության կողմից ուղարկված հետախույզներ էին, որոնք որպե առ որպե սպասում

---

[11] Հայրենիք, 1934, թիվ 5, էջ 57:
[12] Դիւան..., հտ.Ա., էջ 21:

էին հայկական խմբերին: Խմբի սահմանն անցնելու մասին արդեն տեղյակ էին պահել Թոփրակկալեի (Ալաշկերտ) թուրքական կայազորի հրամանատարությանը և ռուս սահմանապահներին: Քրդական ջոկատների և նրանց օգնող թուրք հեծյալների աչքից փաստորեն չէր վրիպել խմբի անցումը:

Կես ժամ հանգստանալուց հետո խումբը պատրաստվում է շարունակել ճանապարհը և անցնել սահմանը,ուր և հանդիպելով քրդական հրոսակներին, սկսում են հրացանաձգությունը: Այնուհետև,խմբից 15 ձիավոր անցնում են սահմանը և ոտք դնում բուն տաճկական հողի վրա Բասենի և Ալաշկերտի շրջանում, և հարձակվում Ախվարկ գյուղի վրա: Այշին-Օղլի և Ախվարկ գյուղերի բնակչությունը որոշում են դիմադրել:Շուտով քրդական Ախվարկ գյուղից խմբի դիմաց են դուրս գալիս 20 ձիավորներ:Խմբի մարտիկներին հաջողվում է գերել 2 քրդերի, որոնց օգնությամբ էլ բարձրանում են Բոզ-Դաղ լեռը և դիրքավորվում[13]: Կուկունյանը ճիշտ կողմնոռոշվելով խմբով ամրանում է Բոզ-Դաղ լեռան վրա, այլապես նրանք կջախջախվեին հակառակորդի գերակշռող ուժերի կողմից: «Հասանք Ղազարգուլա ծոր 1890թ. սեպտեմբերի 22-ին: Այդտեղ քիչ հանգստութիւն առինք:Ամէն մարդ իրան համար հաց ունէր.կերանք հացերնիս: Քիչ ցուրտ էր, կրակ վառեցինք,տաքցանք:

Արդէն առավոտյան մոտ էր,աղոթարան բացվեց,շարունակեցինք մեր ճանապարհ: Հասանք Բոզ-Դաղ»,- կարդում ենք Սեսրոպ Վարդանյանի հուշերում[14]:

Երբ խումբը հասնում է Բոզ-դաղի գագաթին, զորքն ու քրդերը, մոտ 2000 հոգի, հասնելով ստորոտին, բավական մեծ հեռավորությունից սկսում են հրացաններից անկանոն կրակ արձակել խմբի ուղղությամբ:«Կուկունյանը խիստ պատվիրել էր, որ գնդակ չարձակեն, մինչև որ հակառակորդը չմոտենա հրացանի ասպարեզի չափ: Ժամը 9-ին հակառակորդն արդեն 1700 քայլի վրա էր, Հանկարծ խմբի կողմից որոտում են հրացանները, դղրդնցնելով շրջակա լեռները: Թշնամու զոհերը տեսնելով, տղերքը ավելի ևս ոգևորված անշեղ գնդակներ են տեղում իրենց ավանդական հակառակորդների գլխին, որոնց դիակները հետզհետե ծածկում են լեռնալանջերը. կռիվը տևում է մինչև երեկոյան ժամը 7-8-ը: Խմբի կողմից այդ ահեղ կռվին չի թափվում և ոչ մի կաթիլ արյուն, մինչդեռ թշնամու կորուստը նշանակալից էր»:[15] Խմբի հրամանատարներից մեկը ախալցխացի Ստեփանը, թուրքական ուժերի հրամանատարին վախեցնելու և շփոթության մեջ պահելու համար, խմբի մարտիկներին բաժանել էր երկու մասի և նրանց գլուխն անցած չորս պտուտ կատարեցին սարի շուրջը .«Սարին ետև փոս էր, կիջնայինք փոս, կը դառնայինք առաջ, որ

---

[13] Հայաստանի Ազգային արխիվ,ֆ.1633, ց.5, գ. 21, թ. 83:
[14] Դրոշակ, 1930, թիվ 6-7,էջ 169:
[15] Դիւան..., հ.Ա, էջ 15:

թուրքեր կերևնան մեզնից, մենք ալ անոնցմե: Թուրքեր կարծելով, թե ինչքան են ատոք, որ վերջ չկա այդպես թուրքի, քուրդի աչք վախցավ»[16],- կարդում ենք Մեսրոպ Վարդանյանի հուշերում: «Սուքն իջավ, նորից իրարանցում սկսվեց խմբի մեջ: Այս անգամ հինգ տաճիկ էին բռնել. մեկը խավարից օգտվելով փախել էր: Անմիջապես «հանգստացրինք» տաճիկներին: Սրանք երեք արջառ ունէին, մորթեցինք ու լափեցինք կիսահում:Մի տասներկու հոգի ճամբորդ նկատեցինք.մեր ձիավորները յառաջ վարեցին. բայց նրանք զինուած էին ու փորձուած, անմիջապես քարերի յետև դիրք մտան.մեր հեծեալներն այլևս մոտենալ չկարողացան»:[17] Խմբին որսալու համար Թոփրակ-կալեից (կամ Թոփրակկալե) ուղարկում են թուրքական զինվորների կես վաշտ,բայց անօգուտ որովհետև խումբը հեռանում է: Դեպքը տեղեկագրվում է իշխանության վերին ատյաններում, և կազմակերպիչներին որակելով «չարագործներ», հրաման է արձակվում հետապնդել և ձերբակալել: Խումբը ընկնում է շրջապատման մեջ երեք կողմից թուրքական ուժերով, իսկ չորրորդ կողմում ռուսական սահմանների երկարությամբ կանգնել էին սահմանապահները: Երեկոյան թուրքական ուժերը սկսում են ետ քաշվել Ալաշկերտի ուղղությամբ: Այստեղ պարզվում է, որ խումբն իր ողջ կազմով է և սպանվածներ չի տվել: Ս. Կուկունյանի խումբը որոշում է շարժվել դեպի Մատռաբերդի բարձունքները, ուր մի որոշ ժամանակ առաջ եղել էր Հունոն* իր խմբով[18]: Հասնում են Թեքեբինայի ձորը: Ըստ հուշագիր մշեցի Մեսրոպ Վարդանյանի Սարգիս Կուկունյանի խմբին այստեղ պետք է միանային Հունոյի և ալաշկերտցի Նազարեթի խմբերը, որոնք պետք է նախորոք հասնեին Թեքեբինա: Բայց այդ օգնությունը չկայացավ:Սարգիս Կուկունյանն իր մարտիկներով ստիպված եղավ մնալ Թեքեբինայի ձորում՝ հանգիստ առնելու: Ուղեկցորդները թողել փախել էին, սնոնդի պաշարները սպառվել: Պարզ է, առանց սննդի, ուղեկիցների ու ռազմամթերքի անհնար էր որևէ բան ձեռնարկել: «Մեզնից, կարող եմ ասել, թե,երեք մասը տղերքանց փափուկ ապրած տղերք են.ոչ բեռ շալակել տեսած են, ոչ անօթութիոն,ոչ այսպես երկար ճանապարհ քալած ունեին: բայց այն սեր, որ տպավորված էր անոնց սրտին մեջ,ոչ թե այդ նեղություններ՝ այլ ամենայն սիրով մեռնիլ ազգի ազատության համար»,- հիշատակում է արշավանքի մասնակից Մեսրոպ Վարդանյանը:[19] Խորհրդակցելուց հետո որոշվեց դուրս գալ ռուսական սահմանը, մարդկանց տեղավորել գյուղերում, որտեղ

---

[16] Դրոշակ, Փարիզ, 1930, թիվ 6-7, էջ169:

[17] Նույն տեղում:

* Նույն ինքը Հարություն աղա, Հարություն Տեր-Մարտիրոսյան, ծնունդով վանեցի (Տես, Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության, հտ.Ա., Սթենք, 1990, էջ 115-117):

[18] Հայաստանի Ազգային արխիվ,ֆ.1633, ց.5, գ. 21, թ 84:

[19] Դրոշակ, 1930,թիվ 6-7, էջ 170:

նրանք պետք է ծմեռեին: Այստեղից,Արաքսի հովտով շարժվում են դեպի հայկական Խառ և Ղարաբաղ գյուղերը:Հետք չթողնելու համար խումբը սպանում է ճանապարհին հանդիպած մի քանի քրդերի:

Հրամանատարի և վալադների անփորձության հետևանքով խումբը շեղվում է ճանապարհից և սարերում ու ձորերում երկար թափառելուց հետո, խմբի մի մասը հասնում է Խառ (Խար) գյուղը /Կաղզվանի շրջանում/ և տեղավորվում հանգստանալու գյուղի այգիներում, իսկ մյուս մասը ցրվում զանազան ուղղություններով: Խառի գավառապետը գյուղացիներին կարգադրել էր, որպեսզի չընդունեն խմբի տղաներին: Խառ իջնող խումբը նկատվել էր Կաղզվանի թուրքերի կողմից, որոնք նախապես զգուշացրել էին գավառապետին: Մինչև Կուկունյանն իր զինակիցներով հանգստանում էր Խառի այգիներում՝ գավառապետի օգնական Կուգուշևը 15 զինվորներով հասնում է դեպքի վայրը և ծերբակալում խարույկի շուրջ հանգստացող խմբի տղաների մի մասին Եփրեմ Դավթյանին, Մեհրաբ Դաշտոյանին և Սահակ Ասրոյանին:Ձերբակալվում է նաև խմբից ետ մնացած Հովհաննես Մարգարյանը, որն էլ և խոստովանում է ամեն ինչ: Կոզակները Արաքսն անցած ձիերի հետքերով շարժվում են դեպի Խառ գյուղը և ընդհարում է սկսվում ռուս զինվորների ու խմբի անդամների միջև, վերջիններս Սարգիս Կուկունյանի գլխավորությամբ հանգստանում էին խարույկի շուրջ: Կաղզվանից ուղարկվում է օգնական ուժ մեկ գումարտակ զինվոր,հարյուր կոզակ,մեկ հարյուրյակ սահմանապահներ և Դերբենդյան գնդի որսորդական մի խումբ[20]: Այս բոլոր զորամասերը շրջապատեցին Խառ և Ղարաբաղ գյուղերի բարձունքները:Կոզակների խումբը առաջնորդում էին հայ զինվոր Մարտիրոսյանը և գյուղի մուխտար Գրիգոր Ոսկանյանը, որոնք և բանակցություններ են վարում առաջարկելով զինաթափվել: Առաջարկը մերժելուց հետո տեղի է ունենում փոխհրաձգություն, վիրավորվում է մեկ կոզակ: Կապիտան Կուգուշևը տղաներին մի ամբողջ օր պահում է շրջապատման օղակի մեջ, մինչև հաջորդ օրը ժամը 12-ին Կաղզվանից օգնության են հասնում Դերբենդյան 154-րդ գնդի մի վաշտ և մի ջոկատ էլ Կարսյան սահմանապահ գնդից:Երիտասարդ հեղափոխականների դրությունը օրհասական էր.նրանք անելանելի վիճակում էին հայտնվել մտադրություն չունեին կռվելու ռուսական զինվորների դեմ,իսկ վերջիններս օղակը սեղմած պահելով սկսեցին խուզարկություններ ու ձերբակալություններ: Կուկունյանը խմբի տղաներին առաջարկում է իբրև ռուսահպատակներ հանձնվել առանց որևէ դիմադրության, այն համոզմունքով,որ ռուսական կառավարությունը իրենց ոչինչ չի անի,քանի որ շարժումն ուղղված էր ոչ թե Ռուսաստանի,այլ Թուրքիայի դեմ: Բայց, այնուամենայնիվ տղաների մի մասը դիմադրություն ցույց տվեցին,իսկ մնացածը դիմեցին փախուստի,որոնց թվում Սարդարը, երկու Աբրահամները,

[20] Նույն տեղում:

բաշքայադիկլարցի Մուկուչը, որոնք Ռուսական կառավարության կողմից դատապարտվածներ էին տաժանակիր աշխատանքի և խիստ դեմ էին հանձնվելու առաջարկին: Սրանք իրենց ձիերը հեծած, կրակ արձակելով կոզակների շղթայի վրա,անվտանգ կտրելով կոզակների շղթան, դիմուն են փախուստի: Նրանց օրինակին հետևում են Քեռին, ղարաբաղցի Աբրահամը, Արամայիս Ազնավուրյանը և ևս մի քանի հետևակ զինվորներ, որոնք ապաստան են գտնում Չերմալի գյուղում/Կարսի շրջան/, որտեղից էլ հաջորդ օրը գաղտնի տեղափոխվում են Կարս:

Խմբի անդամներից սպանվեցին էրզրումցի դարբին Ստեփանը և մշեցի Նատոն: Ամբաստանագրի տվյալներով կորուստները կազմեցին Սարգիս Կուկունյանի խմբից 4 հոգի/որոնց մեջ նաև զինվորական ղեկավար Սարդար Ավետիսյանը/, 1 կոզակ, 10 քուրդ և թուրք: «Բոլորին ձերբակալելուց յետոյ, կառավարութիւնը գրաւում է 28 բերդան հրացան, 2 վենչեստրի, 2 Պիրօլի 4, Շնէդդէրի և այլ հրացաններ: Միաժամանակ վերցնում են 11 դաշոյն, 2 սուր,6 սւին,1 ատրճանակ, 24 եափունճի և 6 պայուսակ փամփուշտներով լիքը»[21]:

Այսպիսի տխուր ու ողբերգական վախճան ունեցավ Սարգիս Կուկունյանի գլխավորած երթը դեպի Երկիր:

Չերբակալված տղաներին նետում են Կաղզվանի բանտը Ս.Կուկունյանին առանձին սենյակում,իսկ մյուսներին երկու սենյակներում,,ուր պահում են շուրջ մեկ ամիս: «Կարծում էինք, թե այսօր վաղը մեզ կարձակեն,- ասում է արշավանքի մասնակից Յովսէփը.- Շատ միամիտ էինք եւ անփորձ:Մեր անփորձությունը հասնում էր յիմարութեան: Միայն մի ոստիկան էր դրուած մեզ հսկելու եւ կամերայից դուրս բերելու համար:Նա էլ ամբողջ օրը նստած տեղը մրափում էր.եւ ոչ մէկիս մտքովը չանցավ փախչել,չնայած որ այդքան հեշտ էր փախչելը»[22]: Կուկունյանն էլ եղել է այդ տղաների մեջ, որոնցից ոչ մեկը չէր մտածել օգտվել պատեհ առիթից և փախչել: Նրանք համոզված ու վստահ են եղել,որ իրենք չպիտի պատժվեն ռուս կառավարության կողմից, քանի որ արշավանքը ուղղված չէր նրա դեմ: Հավանաբար Կուկունյանը չէր մտածել,որ Կաղզվանի բանտում եղած ժամանակ դեռ չէր տվել իր ազնիվ խոսքը և ոչ էլ առիթ էր ունեցել ծանոթանալու փոխ-գնդապետի հետ,որն ի հայտ էր եկել միայն Կաղզվանից Կարս փոխադրող հատուկ զինվորական պահակախմբի հետ: Եվ, երբ կալանավորները դեռ Կաղզվանի բանտում էին և պետք է փոխադրվեին Կարս, ուր հասնելը մեկ օրվա ճանապարհ էր և պետք է գնային հետիոտն, Սարգիս Կուկունյանի խուցն է մտել այդ դաղստանցին և հայտարարել, որ «ինքն է ստանձնել բանտարկյալների փոխադրութիւնը, բայց լուր է ստացել, որ հայերը պատրաստւում են յարձակուել եւ խլել ձերբակալվածներին. եթէ

---

[21] Նորեան Գ., Դրուագներ Հ.Յ.Դ. գործունէութիւնից,Բոսքը,1917, էջ89:
[22] Հայրենիք,1934,թիվ 6, էջ 58:

այդպիսի բան պատահի, հետեւանքը կը լինի խիստ աղէտաբեր: Նա խորհուրդ է տալիս ազդել դրսեցիների վրայ, որ նման քայլ չանեն, Կուկունեանն էլ ազնիւ խօսք տայ, որ փախչելու փորձ չկատարի: Կուկունեանն ազնիւ խօսք է տալիս»[23]: Եվ դաղստանցի պահակապետը՝ փոխգնդապետ Սեյիդ Հուսեինը, բանտարկյալներին Կարս հասցնելուց հետո,իր հատուկ շնորհակալությունն է հայտնել Սարգիս Կուկունյանին, որ փախուստի ամեն հնարավորություն ունենալով հանդերձ ասպետորեն պահել էր իր պատվի խոսքը: Մինչդեռ, Սարգիս Կուկունյան չէր կամեցել՝ փախչել այն նպատակով,որ հնար ունենա դատավարության ժամանակ պաշտպանել Հայոց դատը: Ավելին,նա իր սպիտակ ձին տալիս է դարաբաղցի Աբրահամին,որը դարաբացի Զաքարի, Սարդարի և ալեքսանդրապոլցի Մուկուչի հետ փախչում է:

Վիրավոր Զաքարին թողնելով Ղազարապատում Վասակի տանը,երեք ընկերներով բարձրանում են Արագածի փեշերը և ապաստան գտնում իրենց ծանոթ քրդերի տանը:Սակայն,ոչ մի սրբություն չունեցող քրդերը գիշերվա ուշ ժամին սպանում են Մուկուչին ու Սարդարին:Իրեն մոտեցող արնոտ դանակի հոտից, թե մորթվող ընկերների խռխռոցից արթնանում է Աբրահամը, անմիջապես բարձի տակից հանում ատրճանակը և երկու քուրդ սպանելով նստում ձին ու փախչում[24]: Արտացավ դարաբաղցին լսելով,որ Կուկունյանն իր մյուս ընկերներով ձերբակալված է և պետք է Կարսից Թիֆլիս տեղափոխվեն, որոշում է Դիլիջանում հարձակվել խմբին ուղեկցող ոստիկանների վրա և ազատել իր ընկերներին: Բայց դա չի վիճակվում Աբրահամին,քանզի նա մատնությամբ 1891թ. հունիսի18-ին Նոր-Բայազետում ձերբակալվում և տեղափոխվում է Կարսի բանտ[25], ուր Կաղզվանից փոխադրվել էր Կուկունյանն իր բախտակիցներով: Կարսի բովանդակ հայությունը սիրով ու ակնածանքով ընդունեց ձերբակալված տղաներին: «Կարսի ժողովուրդը ծարաւի էր տեսնելու «հայ զորքը»: Այդ տեսավ ու շոշափեց: Ու թեև այդ «զորքը» բանտարկուեցավ և աքսորուեցավ, բայց ժողովուրդը կը սիրեր իր տեսածը և կուզեր ունենալ ավելի անթերի, ավելի կատարելագործուած զինվորական ուժ մը, և ունեցավ»[26]: Եվ առանձնապես Կարսի շրջանի հայկական գյուղերում մեծ և բուռն ոգևորությամբ էին Կուկունյանին ու նրա խմբի անդամներին ճանապարհել: Հուշագիր Մարտին Շաթիրյանի ասելով, «երբ բանտարկյալներին դուրս էին բերում բաղնիք տանելու համար,այդ օրը քաղաքը ստանում էր կես-տոնական, կես-սուգի կերպարանք: Շատերը խանութները փակում էին: Երեխաների փոքրիկ խմբեր սկսում էին «Մեր Հայրենիք» երգել:Կալանավորները ծայնակցում էին նրանց,եւ

---

[23] Դիւան Հ.Յ.Դաշնակցութեան, հտ.Բ, Պոսթըն, 1934, էջ 21:

[24] Հայաստանի Ազգային արխիվ, ֆ.1633, ց.5, գ. 23, թ. 169:

[25] Աբրահամն այստեղից փախչելու փորձ է անում,բայց սպանվում բանտի պարիսպների տակ բանտապահ ռուս կոզակի արձակած գնդակից:

[26] Ռուբէն, Հայ Յեղափոխականի մը Յիշատակները,հտ. Ա, էջ 110:

այդպիսով բաղնիք գնալը ստանում էր քաղաքական ցույցի բնույթ»[27]: Կուկունյանի խմբի մասնակիցներից մյուսը մշեցի Սեսրոպը,որին խառնից հաջողվել էր փախչել և անցնել Կարս,և ականատես է եղել տղաների Կարս բերելուն, գրում է հետևյալը. «Սարգիս Կուկունեանի Կարս բերած օրը Կարսի հայությունը բոլոր խանութները գոցած էր: Ժողովուրդը խռնված էր ճանապարհին, փողոցներում, տանիքների վրայ:Կառավարությունը թույլ չէր տալիս, բայց նրան լսող չկար: Շատերը խումբ- խումբ կերթային Կաղզուանի ճանապարհը, որտեղից պիտի բերեին բանտարկեալները... Կեսօրից հետոյ,հեռուեն երևցան բանտարկյալները:Կուկունեանը կը քալեր առջևէն.տղերքը բոլորը շղթայակապ էին,շրջապատված էին ոստիկաններով,կոզակներով ու հետևակ զինվորներով: Երբ խումբը մոտեցավ ժողովուրդին,ժողովուրդ շատ տրտում, տխուր էր, բայց խումբի տղերք ուրախ էին:Կրկին ժողովուրդ խումբին կը հուսադրեր:Ու, հանկարծ,բազմութիւնը օդը թնդացուց «կեցցե՜»-ներով եւ այդպէս «կեցցե՜» աղաղակելով՝ հետեւեց մինչեւ բանտ»[28]:

Արշավանքի մյուս մասնակից Արամայիս Ազնավուրյանը,Կուկունյանի Կարս փոխադրելու նկարագրությունը տալիս է հետևյալ կերպ. « Ժամի մոտ 12-ն էր,երբ շղթայակապ Կուկունյանը ոստիկանների ու հետևակ զինվորների մի զինուած վաշտով քաղաք մտավ: Ամբողջ Կարսը թափվել էր դուրս եւ խռնվել այն փողոցներում,որոնցով պիտի անցներ Կուկունյանը կենտրոնական բանտ գնալու:

Կուկունյանը երբ մտավ զինվորական ջոկատների եւ ժողովրդի փողոցների երկու կողմերում կոգնած շղթաների մէջ ժողովուրդը,անպատմելի վշտով համակված,լուռ հեկեկում էր:Ոստիկանական ու զինվորական վաշտերը զուսպ էին ու զգաստ: Կուկունյանը, արտաքինով թեեւ հոգնած ու փոշաթախտ, սակայն առնական ու անվարան ընթացքով քայլում էր հսկող ջոկատի մէջտեղով: Նրա ձեռքերին ու ոտքերին ամրացած շղթաները նրա քայլվածքի հետ համաչափորեն աղմկում էին դաժան սառնութեամբ եւ Կուկունյանի ու նրա ընկերների առնական քայլվածքին տալիս էին արտակարգ թափ ու խորհրդավորութիւն: Բանտարկվածների խմբի առջևից հպարտորէն ու հաստատ քայլերով գնում էր շղթայակապ Կուկունեանը:Նրան հետեւում էին նրա զինակից ընկերները, երեքական հոգի շարքերով,իսկ ամբողջ խմբի չորս կողմից սուինները ծեռքներին պատրաստ ուղեկցում ու համաչափ ընթանում էին պահակախմբի անդամները:Այսպես շրջապատված Կուկունեանի խումբը

---

[27] Հայրենիք,1923,թիվ 5, էջ 51:

[28] Սեսրոպ Վարդանեանի յուշերը Կուկունեանի արշաւանքի մասին, Տե՛ս, Դրոշակ, Փարիզ, 1930, թիվ6-7, էջ 173:

անցավ Կարսի մի ծայրից միւսը եւ ժողովրդի հեկեկանքների միջով առաջնորդուեց քաղաքի գլխաւոր բանտը Ղարադաղ»[29]:

Միայն Կաղզվանում ու Կարսում չէր ժողովրդի հետաքրքրությունը, հատկապես ցավն ու վշտակցությունը: Խորն էր նաև համակրանքը Կուկունյանի հանդեպ հուզիչ ու անկեղծ, և պատահական չէ, որ ամբողջ կովկասահայությունը ցնցված ու վրդովված էր ռուս կառավարության տմարդի վերաբերմունքից: Կուկունյանն ու իր ընկերները ազգային նահատակներ էին ամենքի աչքում, նրանց ծեռնարկը աննախընթաց ժողովրդական մեծ ոգևորություն էր առաջ բերել, և բնականաբար նրանց ճակատագիրը պիտի հուզեր հայությանը: Կուկունյանն ու իր ընկերները խրախուսանքի բազմաթիվ նամակներ էին ստանում, որոնցից մեկում ասվում էր. «Կուկունյանն իր գործերով զարթնեցրեց հայ ազգը խոր քնից... Յուրաքանչիւր ուրախ սեղանի ժամանակ առաջին կենացը հայրենիքին է նվիրված լինում.երկրորդը հայրենիքի նախավկայ Կուկունեանին... Այսուհետև Կուկունեանը էլ չի պատկանում ոչ իրեն, ոչ էլ ծնողներին, այլ կազմում է ամբողջ ազգի սեփականությունը. նրա անունը պիտի անցնի պատմութեան էջերը»:[30]

Կուկունյանի արշավանքը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի զարթոնքի արգասիքն էր: Չնայած արշավանքն անհրաժեշտ արդյունքի չհասավ, բայց կարևոր դեր խաղաց հայդուկային ուժերի համախմբման գործում, հատկապես Արևելահայաստանում:

---

[29] Հայրենիք, 1937,թիվ 5,էջ 138-139:
[30] Դիւան...,հտ.Ա, էջ 11: